

Ալբերտ Վ. Մուշեղյան
բանաս. գիտ. դոկտոր

ԱՐՄԻՆ ՎԵՂՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՆ ԱՆԱՐԳԵԼՈՒ ՓՈՐՉ

*Մարտին Թամկեի «Արմին Թ. Վեզները և հայերը - մի ականապեսի հավակնությունը և իրողությունը» արեւնախոսության մասին**

1980-1990-ական թվականներին ավետարանական աստվածաբան Մարտին Թամկեն Գերմանիայում հանդես է եկել Հայոց ցեղասպանության պատմության լուսաբանման մեջ Արմին Թեոֆիլ Վեզների ունեցած դերը կասկածի տակ դնող մի շարք հոդվածներով: Այս թեմային է նվիրված նաև Մարբուրգում՝ Ֆիլիպսի համալսարանում, ավետարանական աստվածաբանության դոկտորի գիտական աստիճանի արժանացած նրա ատենախոսությունը՝ «Արմին Թ. Վեզները և հայերը-մի ականատեսի հավակնությունը և իրողությունը» վերնագրով¹, որն իբրև մենագրություն լույս է տեսել 1993-ին և լրացումներով վերահրատարակվել 1996-ին՝ Համբուրգում: 1999 թվականից Մ. Թամկեն աշխատում է Գյոտինգենի Գեորգ Ավգուստի համալսարանում որպես պրոֆեսոր, իսկ 2007-ից՝ աստվածաբանության ֆակուլտետի ղեկավար:

1. Աստվածաբան Մ. Թամկեի տարօրինակ մեկնակետը

1915-1916 թթ. Միջագետքում տեղակայված թուրքական 6-րդ բանակը գլխավորող Գերմանական ռազմական շտաբի սանիտարական բաժնում որպես սանիտար զինվոր և ապա կրտսեր լեյտենանտ ծառայած Արմին Վեզները Մեծ եղեռնի այն բացառիկ ականատեսներից մեկն էր, ով անտարբեր չեղավ հայ ժողովրդի բնաջնջման ահավոր պատկերներին: Եփրատի երկայնքով ձգվող մահվան ճամբարներից Վեզները Գերմանիայում ապրող իր հարազատներին և գերմանացի ճանաչված գրողներին ուղարկած գաղտնի նամակներով ի լուր աշխարհի ազդարարեց Միջագետքում իրագործվող հայ ժողովրդի բնաջնջման մասին:

Թեև Միջագետքում Արմին Վեզները ծառայում էր ընդամենը իբրև սանիտար զինվոր և կրտսեր լեյտենանտ, բայց այդ ժամանակ արդեն իրավագիտության դոկտոր էր և բանաստեղծական մի շարք գրքույկների հեղինակ: Ուստի նրա խոսքը և Միջագետքի մահվան ճամբարներում լուսանկարած ցեղասպանության

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2010:

1 St u Dr. Martin Tamcke: ARMIN T.WEGNER UND DIE ARMENIER. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen. HABILITATIONSSCHRIFT, eingereicht beim Fachbereich «Evangelische Theologie» der Philipps – Universität Marburg.

Բ (Ը) տարի, թիվ 2(30) ամսիկ-հունիս 2010

ՎԵՂՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ

պատկերները իրավական լուրջ կշիռ էին ստանում՝ կայգերական Գերմանիայի թողութությամբ Օսմանյան կայսրության իրագործած հայերի տեղահանությունը և բնաջնջումը դատապարտելու տեսակետից: Ահա թե ինչո՞ւ արդի Թուրքիայում նույնպես խիստ կարևոր են համարում Հայոց ցեղասպանության ակնատես, իրավագիտության դոկտոր, կրքոտ հրապարակախոս և տաղանդավոր էքսպրեսիոնիստ բանաստեղծ Արմին Վեգների անձի և հայանպաստ գործունեության վարկաբեկումը: Դժբախտաբար, հենց դրան են ուղղված նաև ավետարանական աստվածաբան Մարտին Թամկեի ոչ աստվածահաճո ջանքերը:

Իր ատենախոսության մեջ պրոֆեսոր Թամկեն մեղադրում է Արմին Վեգներից Միջագետքում սանիտարական ծառայության պատրվակով վայելքներից օգտվելու և պարապ թրևելու համար: Վեգների այդ շրջանի գործունեությունը նա անվանում է «ամոթալի», իսկ նրա վերադարձը Թուրքիայից՝ «ամոթալի վտարում» (schmachvolle Abschiebung)²:

Պատահական չէ նաև, որ պրոֆեսոր Մարտին Թամկեն իր հողվածներում և մենագրության մեջ ամենուրեք օգտագործում է միայն «արտաքսում» ու «տեղահանություն» բառերը, իսկ վիեննաբնակ պատմաբան Արտեմ Օհանջանյանի գերադասած «Ժողովրդի սպանդ» (Völkermord) և «ցեղասպանություն» (Genozid) տերմինները³ համարում է հայերի հավակնություն: Նրա կարծիքով՝ հայերի հետ կատարվածը գենոցիդ անվանելը կնշանակեր գերագնահատել այն, ուստի այդ բառի կիրառությունը «պետք է թողնել եղելության քաղաքական քննարկմանը»⁴:

Իր ատենախոսության մեջ պրոֆ. Թամկեն բավարարվում է միայն հայտարարելով, թե «Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայում հարյուրհազարավոր հայեր մահացել են տեղահանման ընթացքում»⁵, և փաստորեն արդարացնում է տեղահանված ժողովրդի բնաջնջումը հետևյալ պատճառաբանությամբ. «Պատերազմի ժամանակ ռազմական գործողություններն առավել գերակա են, քան բարոյական խնդիրները»: Եվ դրանով է բացատրում այն փաստը, որ Գերմանիան պաշտոնապես ձեռնպահ վերաբերմունք է որդեգրել դաշնակից պետության (Թուրքիայի) միջոցառումների նկատմամբ⁶: Սա կոչվում է ավետարանական աստվածաբանություն ըստ պրոֆ. Թամկեի, որը ոչ մի ընդհանուր բան չունի ավետարանական միսիոներների մարդասիրական առաքելության հետ: Ի վերջո, ինչպե՞ս կարող է մի անպաշտպան ժողովրդի համատարած բնաջնջումը դիտվել որևէ պետության «միջոցառում» կամ «բարոյական խնդիր»:

Օսմանյան Թուրքիայում հայերի հետ տեղի ունեցածը բնորոշելու համար պրոֆ. Թամկեն ի մի է բերում մի շարք քաղաքագետների ու ժամանակակից պատմաբանների տեսակետները: Վկայակոչելով հայերիս քաջ հայտնի Յոհաննես Լեփսիուսի «Հայաստան և Եվրոպա 1914-1918»⁷ աշխատությունը, պրոֆ. Թամկեն ցանկանում է ապացուցել, թե իբր Լեփսիուսի մոտ խոսք է գնում միայն հայերի տեղահանության մասին, դրա կողքին մոռանալով նույն Լեփսիուսի

2 St' u M. Tamcke, S. 131.

3 St' u A. Ohandjanian: Armenien, Der verschwiegene Völkermord, Wien 1989.

4 Ebd., Einleitung, S. 11, Anm. 1 (վերջում):

5 M. Tamcke, S. 11.

6 St' u M. Tamcke, S. 11.

7 St' u J. Lepsius: Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam 1919 (Nachdruck Bremen 1986).

«Հայ ժողովրդի մահվան երթը» աշխատությունը (Պոտսդամ, 1919թ)⁸: Ավելին, ներածության սկզբում պրոֆ. Թամկեն առանց որևէ առարկության բերում է թրքամետ մտայնությամբ տոգորված գերմանացի պատմաբան Է.Ֆայգիի տեսակետը, որը Հայոց ցեղասպանությունն անվանում է առասպել, ինչը հայերն իբր հորինել են իրենց ծայրահեղականությունն ու սհաբեկչությունն արդարացնելու համար: Շատ խոսուն է Է. Ֆայգիի 1986 թ. հրատարակած գերմաներեն աշխատության վերնագիրը՝ «Տեռորի առասպելը. հայկական ծայրահեղականությունը, նրա պատճառներն ու հետին նպատակները»⁹: Այնպես որ պրոֆ. Թամկեի ամբողջ ձեռնարկը ոչ միայն հակավեցնական միտում ունի, այլև Հայոց ցեղասպանության իրողությունը հերքելու նպատակ:

Գալով Գերմանիայի պատասխանատվության խնդրին, պրոֆ. Թամկեն շեշտում է Լեփսիուսի չեզոք դիրքորոշումը այդ հարցում, թեև ինքն էլ անմիջապես հավելում է, որ Լեփսիուսը երբեմն մեղադրում է Գերմանիային՝ Թուրքիայի հետ համապարտ պատասխանատվության մեջ¹⁰: Պրոֆ. Թամկեն մոռանում է, որ 1871թ. գործողության մեջ դրված Պրուսիայի քրեական կոդեքսում կանխամտածված սպանությունը դատվում էր առանձին խստությամբ և «կանխամտածված» բառը մտցվեց որպես հանցանքը ծանրացնող իրավական հատուկ տերմին: Մինչդեռ, մի ողջ ժողովրդի «կանխամտածված բնաջնջում» ծրագրած երիտթուրքերի արարքը աստվածաբան Թամկեն «դաշնակից պետության միջոցառումներ» է անվանում:

2. Արմին Վեգների 1915-1916 թթ. նամակների և օրագրի քննությունը

1916 թ. դեկտեմբերին՝ արձակուրդում եղած ժամանակ, Արմին Վեգները Բրեսլաուում ավարտեց իր երկու գրքերի խմբագրումը, որոնք ամփոփում էին Թուրքիայում նրա վերապրածն ու տպավորությունները: Այդ գրքերն էին «Ճանապարհի առանց տունդարձի (նահատակություն նամակներում)»¹¹ և «Երանության տանը-ուրվագծեր Թուրքիայից»¹²: Դրա վերաբերյալ Վեգները հաղորդել է Բադդադում գտնվող գերմանական շտաբի բժիշկ դր. Շմիդտին 1917 թ. հունվարի 8-ին ուղարկած իր նամակում, հայտնելով, որ ինքը, այդ ընթացքում գտնվելով արձակուրդում, ավարտել է աշխատանքը երկու գրքերի վրա՝ Թուրքիայում ստացած տպավորությունների շուրջ. «Մեկը՝ «Ճանապարհի առանց տունդարձի»-բաղդադյան նամակների ժողովածուն ամեն դեպքում չի կարող լույս տեսնել պատերազմի ընթացքում. երկրորդը՝ «Երանության տանը»-տպավորություններ և ուրվագծեր 1915-ի ամռանը և աշնանը, գուցե կարողանամ բավական կրճա-

8 J. Lepsius: Der Todesgang des armenischen Volkes, Berichtüber das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Potsdam 1919 (Reprint Heidelberg 1980 der Ausgabe Potsdam 1930)..

9 St'u E.Feigl: Ein Mythos des Terrors. Armenischer Extremismus – seine Ursachen und Hintergründe, Freilassing / Salzburg 1986.

10 St'u M.Tamcke, S.11, Anm.1.

11 St'u Der Weg ohne Heimkehr. Ein Martyrium in Briefen Verlag von Egon Fleischei., Berlin 1919. Արմին Թեոֆիլ Վեգներ, ճանապարհի առանց տունդարձի (նահատակություն նամակներում), գերմաներենից թարգմանեցին, առաջաբանով, ծանոթագրություններով ու լուսանկարներով հրատարակության պատրաստեցին Ռիմա Վանուշի Մուշեղյանը և Ալբերտ Վարագդատի Մուշեղյանը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2000:

12 St'u Im Hause der Glückseligkeit, Aufzeichnungen aus der Türkei, Dresden, 1920.

տումներով հրատարակել»¹³:

Մինչդեռ, պրոֆ. Թամկեն ջանք չի խնայում ամենատարբեր հնարքներով ապացուցելու, որ Վեգները Միջագետքում ականատես չի եղել 1915-1916 թթ. հայերի կրած տառապանքներին ու ջարդերին և այդ ամենը նրա նամակներում և գրվածքներում առավելապես «գրական ծագում ունեն», այսինքն՝ Վեգները օգտվել է այլոց վկայություններից՝ նպատակ ունենալով իր համար «կերտել» հայ ժողովրդի պաշտպանի հերոսական կերպար: Այստեղից էլ նրա «արժեզուրկ» եզրահանգումը. «Միայն այլ ականատեսների հաղորդումների հետ համեմատելով՝ կարելի է եզրակացություն անել վեգներյան վկայության ճշմարտացի լինելու մասին»¹⁴:

Այս տարօրինակ եզրակացությունը հօդս է ցնդում Վեգների պատկերած յուրաքանչյուր դրվագի հետ առաջին իսկ հանդիպումից: Հայոց բռնագաղթի ահավոր սարսափները պատմող նրա նամակներից առաջինը Կ.Պոլսից «Գյուլիանե» կոչված ռազմական հոսպիտալի քույր Մարգա ֆոն Բոնիցին գրած շատ հուզիչ նամակն է: Վեգները այն գրել է Ռաս-էլ-Այնից 1915թ. նոյեմբերի 26-ին: Այս գերմանուհի բուժքոջ հետ Վեգները մտերմացել էր Կ.Պոլսում հիշյալ հիվանդանոցում սանիտարական գործին ծանոթանալու օրերին: Նամակը գրված է Կ.Պոլսից Բաղդադ գնալու ճանապարհին, երբ Վեգները նոր էր անցել Փոքր Ասիայի հայաթափ եղած բնակավայրերով: Այստեղ, Կիլիկիայի գառիվայրով ցած սլանալիս, բռնատար ավտոմեքենայի թափքից Վեգները ականատես է դառնում Տավրոսի ու Ամանոսի լեռներով ու լեռնանցքներով դեպի Սիրիայի կիզիչ անապատները քշվող հայ ժողովրդի հոծ թափորներին. «Այսօր անցանք Ամանոսի վրայով, իսկ երկու օր առաջ՝ Տավրոսի: ...Տավրոսի ու Ամանոսի կիրճերով ձգվում է մի տեղահանված ժողովրդի, այդ հարյուր-հազարավոր տարաբախտների ահռելի հեղեղը, որ հորձանք է տալիս լեռների ստորոտով, որպեսզի նվազելով ու նվազելով՝ անվերջանալի թափորներով գահավիժի դեպի հարթավայրը և ծծվելով կորչի անապատում: Ու՛ր, դեպի ու՛ր: Դ-ա այն ճանապարհն է, ուրկից չկա այլևս տունդարձ»¹⁵:

Արմին Վեգները կանխամտածված բնաջնջման ականատեսն էր և ամենևին էլ ո՛չ սովորական ականատեսը, այլ իրավագիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող վկան: Եվ աստվածաբան Թամկեն հանձն է առնում ապարդյուն կերպով ժխտելու իրավագետ դոկտորի և ականատես վկայի ցուցմունքը պատմության ու մարդկության դատաստանի առաջ. «...բոլոր ճամփաների եզրերը բռնված են հայ գաղթականների ողբալի ու սովալլուկ կերպարանքներով, որոնց հեծեծող, աղաղակող, մուրացող կենդանի ցանկապատի միջով, որից մեկնվում են հազարավոր աղերսող ձեռքեր, տառապագին տողանցում են մեր հոգիները»:

«Հենց նոր, երբ գրում եմ այս տողերը, վերադարձա ճամբարում կատարած պտույտից: Ամեն կողմից ինձ պաշարում էին աղաղակող քաղց, մահ, հիվանդություն, հուսահատություն: Տարածվում էին ապականություն և գարշահոտ: Մի վրանից լսվում էր մահամերձ կնոջ թառանչը: Մի մայր, համազգեստիս մուգ մանիշակագույն թևալներին կռահելով սանիտարական գործասին պատկանելս, ձեռները կարկառած իմ կողմը վազեց: Ինձ բժշկի տեղ դնելով՝ նա վերջին ճիգով

13 M.Tamcke, S. 136, Anm. 28.

14 M.Tamcke, S. 71.

15 Ա. Թ. Վեգներ, ճանապարհ առանց տունդարձի: Թարգմանությունը Ա.Մուշեղյանի, էջ 41:

կառչեց թշվառիս, որ ո՛չ վիրակապ ունեի, ո՛չ դեղորայք, և որին արգելված էր նրան օգնելը»:

«Բայց այս ամենը նսեմանում էր այն զարհուրելի պատկերի առաջ, որ ներկայացնում էր որք մանուկների օրավուր աճող բազմությունը: Վրանաքաղաքի ծայրին նրանց համար գետնի մեջ շարքով փոսեր էին փորված, որ ծածկված էին հնամաշ ձորձերով: Դրանց տակ ծվարում էին նրանք գլուխ-գլխի՝ ամեն հասակի տղա ու աղջիկ՝ անապաստան, վայրենացած, սովատանջ, պարենից ու հացից զուրկ, մարդկային ամենաչնչին օգնության կարոտ, և գիշերվա ցրտից դողալով իրար սեղմված՝ փայտացած մատներով մի-մի փոքրիկ ածխակոթ բռնած՝ ապարդյուն փորձում էին տաքանալ: Ոմանք անդադար լսիս էին: Դեղնած մազերը երկար չխուզելուց թափվել էին ճակատներին, կեղտն ու արցունքը՝ երեսներին թանձրացել: Մյուսները պառկած էին մահամերձ: Անհուն էին նրանց մանկական աչքերը և ցավից դուրս պրծած, ու թեև լռիկ նայում էին իրենց դիմաց, թվում էր, թե նրանց դեմքին դառնագույն նախատինք կար աշխարհի հանդեպ: Այո՛, կարծես ճակատագիրը երկրի բոլոր արհավիրքները հավաքել, կիտել էր այս անապատի եզրին, որ մի անգամ ևս ցույց տա, թե մեզ ինչ է սպասում: Սոսկունով համակված՝ ես սրտի բաբախյունով դուրս շտապեցի ճամբարից, և չնայած քայլում էի հարթ գետնի վրայով, գլուխս սկսեց պտույտ գալ, կարծես երկու կողմից գետինը պատռվել ու ոտքիս տակ անդունդ էր բացվել»¹⁶:

Ու՞ր է այստեղ ականատեսի «հերոսական կեցվածքը», որից այնքան սարսափում է պրոֆ. Թամկեն,- մեր առջև մի գերմանացի օրինակահ, վախվորած սանիտար զինվոր է, որին արգելված էր խեղճերին օգնություն ցույց տալ, և մի պարզ մարդկային հոգի, որը իր տեսած սարսափների հուսահատությունից կորցնում է ոտքերի տակ եղած հողը, կորցնում է հոգեկան հավասարակշռությունը: Հարց է առաջանում՝ ո՞վ էր բռնում այս անկեղծ խոստովանության հեղինակ Արմին Վեգների ձեռքը՝ իր ցուցաբերած շինծու կարեկցանքի մասին գրելու, և մահամերձ մանկանը դեղ ու օգնություն հասցնելու հնարովի, սրտաճմլիկ ցույցերով իրեն օրինագանց զինվոր, բայց ազնվահոգի երիտասարդ ներկայացնելու համար: Բայց Վեգները ոչ մի նման բան չի անում՝ իր անձը ցուցադրելու նպատակով:

Չուր չէ, որ Թամկեն լռությամբ է անցնում Վեգների այս և նման նամակների վրայով, այնպիսի լռությամբ, որ թվում է, թե դրանց մասին որևէ տեղեկություն չունի¹⁷: Լռությամբ է անցնում, քանզի նրա նպատակն է իր դրկտորական ատենախոսության մեջ ամեն գնով ժխտել Վեգների ականատես լինելու փաստը:

Մյուս կողմից, ակնարկելով մահամերձ թշվառներին օգնելու հարցում սանիտար զինվորին պաշտոնապես պարտադրված արգելքի մասին, Վեգները առաջին անգամ բացահայտել է Միջագետքի գերմանական ռազմական միսիայում 1915-ին գործող բարձրագույն գաղտնի հրահանգը, որով կատեգորիկ կերպով արգելվում էր հայ ժողովրդի հանդեպ որևէ մարդասիրական վերաբեր-

16 Վեգներ, ճանապարհ առանց տունդարձի, էջ 40-41:
17 Մինչդեռ Մարգա ֆոն Բոնինի մասին Թամկեն իր ծանոթագրության մեջ հայտնում է, թե «Նա մահացել է 1917 թ. հոկտեմբերի 14-ին Տրեսկայի հեղեղատում, ինչպես ինքը՝ Վեգներն էր ավելի ուշ իր ընթերցողներին ծանուցում՝ Մարգային ուղղված իր նամակներից մեկը հրատարակելիս»: Նշված ծանուցման մասին տեղյակ լինելու փաստը ցույց է տալիս, որ պրոֆ. Թամկեն շատ լավ ծանոթ էր սույն նամակին և նրա րովանդակությանը: M.Tamcke, S.137, Anm. 28:

մունք: Հիմա հասկանո՞ւմ է ավետարանական աստվածաբան Թամկեն, թե ի՞նչ նպատակ էր հետապնդում հայ ժողովրդի նման «տեղահանությունը»: Միջագետքի գերմանական ռազմական միսիայում ուժի մեջ մտած՝ «տեղահանության գոհերին օգնություն ցույց տալու» արգելքը հենց այն է, ինչը ավետարանական աստվածաբանը փաստորեն արդարացնում է դաշնակից պետության «ներքին միջոցառումներին» միջամտելու ձեռնպահությամբ¹⁸:

Տասնմեկ ամիս անց, երբ Վեզները Գերմանիա վերադառնալիս նորից անցնում էր այդ վայրերով, տեղահանված հայ ժողովրդից մնացել էին միայն ոսկորներ. «Մոտենալով գետափին՝ նկատում եմ բազմաթիվ գերեզմաններ, հին խարույկների անհամար հետքեր: Մի՞թե այս է այն ահավոր ու սուկալի բռնագաղթի վերջը: Աչքիս առաջ վերստին պատկերանում է տեղահանված ժողովրդի այն թափորը, որի տառապանքով լի ճամբարներում անցյալ տարի թափառում էի զարհուրած հոգով: Շուտով հանդիպում ենք առաջին գաղթականներին: Բոլոր ճանապարհների եզրերը ծածկված են նրանց ոսկերտիքով, որ շլացուցիչ սպիտակին են տալիս արևի տակ»¹⁹ (11 հոկտեմբերի 1916):

Այս նկարագրությունն ընթերցած որևէ մեկին աստվածաբան Թամկեն չի կարող համոզել, թե իբր Վեզներն անձամբ չի տեսել տեղահանված հայ ժողովրդի կանխամտածված բնաջնջումը: Որ այս ամենը իրողություն է, և Վեզները պատկերել է միայն իր աչքով տեսած սարսափները, հաստատում են ավելի ուշ Գերմանիայից Վեզների ուղարկված երկու նամակները վերոհիշյալ բուժքույր Մարգա ֆոն Բոնինին: Դրանցից առաջինը Վեզները գրել է 1916թ. դեկտեմբերի 16-ին՝ Բրեսլաու հասնելուց մեկ շաբաթ անց²⁰. «Ավելի պատահականություն ու հրաշք է, որ կարողացա այդ սարսափազոր ուրվականների դժոխքից նորից կենդանի դուրս պրծնել», - գրում էր Վեզները, ավելացնելով, որ իր գրքերի հրատարակումը գրաքննության պատճառով գլուխ չի գալիս: 1917 թ. հունվարի 10-ին Մարգային գրած երկրորդ նամակում²¹ Վեզները հիշեցնում էր. «Այն, ինչ միսսին ասյրել ենք, շատ բան ամփոփված է «Երանության տանը» գրքում: Իհարկե, այդ բոլորը ես տեսել եմ իմ աչքերով, աչքեր, որոնք երանության այս տունը իրենց տեսակետից են դիտում, քանզի երկրի այդ հրաշալի հողակտորը ամենադժբախտ տունն է, որ կարող էք երևակայել»²²:

Բնությունը երիտթուրքերին պարզել էր բացօթյա լայնածավալ հնոց՝ անջուր անապատ, կիզիչ արև, ավազախառն հեղձուցիչ խորշակ միլիոնավոր մարդկանց

18 M.Tamcke, S. 11.

19 Ա.Թ. Վեզներ, ճանապարհ առանց տունդարձի: Թարգմանությունը Ա.Մուշեղյանի, էջ 66:

20 Ստիպված եմ մի ուղղում առաջարկել պրոֆ. Թամկեի և Վեզների արխիվը մշակողների ուշադրությանը. այստեղ խոսքը չի վերաբերում «Einer anderen Schwester, der er anvertraute» («Մի ուրիշ բուժքրոջ, որի հետ Վեզները մտերմացել էր»), Թամկեն սխալվում է, իբր նամակը գրված է Դիստել բուժքրոջը (Brief an «Distel, Schwester» vom 16 Dezember 1916): Այնինչ «Դիստելը» նույն Գյուլհանեի բուժքույր Մարգա ֆոն Բոնինի մտերմական մականունն էր, որին այդպես (եկբան, դժնիկ, տատասկափուշ) էին անվանում հավանորեն իր «փշոտ» բնավորության կամ «զգզգված» (zerzaust) մագերի համար: Ռա պարզ երևում է 1915 թ. նոյեմբերի 26-ի նամակի առաջին տողերից, որոնք վրիպել են ոմանց աչքից. «An eine Schwester von Gul – Hane Marga v. Bonin: Meine Liebe Distel und ihr andern blumen im Rosenhaus!» (Heimkehr, S.16): Ակնհայտ է, որ Վեզները «Distel» է անվանում նույն Մարգա ֆոն Բոնինին, որին ուղղված է սույն նամակը: Ուրեմն, Բրեսլաու հասնելուն պես, դեկտեմբերի 16-ին Վեզները առաջինը Մարգային է հայտնել «Սուկալի ուրվականների դժոխքից» (Scheuchenhalle)՝ Միջագետքից իր դուրս պրծնելու մասին:

21 Տե՛ս Brief an Marga [Marga von Bonin] vom 10. Januar 1917. Նամակն ուղղված է Մարգային, որին պետք է նույնացնել բուժքույր Մարգա ֆոն Բոնինի հետ, քանի որ ոչ մի ուրիշ կին Վեզների գրական ժառանգության մեջ «Մարգա» անունով չի հիշատակվում:

22 M.Tamcke, S. 136, Anm. 28.

ծարավով ու տապով մեռցնելու համար: Ապագա նացիստները չունեին այս բոլոր «բարիքները»: Նրանք երիտթուրքերից ընդօրինակեցին ոչ միայն մահվան ճամբարների գաղափարը, այլև իրենց սառը հյուսիսում սկսեցին ողջակեզի համար զազախցիկներ ստեղծել՝ թուրքական բացօթյա «հնոցի» փոխարեն: Բայց երիտթուրքերը չբավարարվեցին միայն բնաջնջելու այս եղանակով: Պրոֆ. Թամկեն լավատեղյակ է Լեփսիուսի հաղորդած դժոխային սպանդին, երբ Դեր-Ջորի անապատում ժողովված, արդեն իսկ դանդաղ մահվան դատապարտված «հայ գաղթականներին շարունակաբար առանձնացնում էին մի քանի հարյուր հոգուց բաղկացած խմբերով և քշում հարավ-արևելք՝ դեպի վարակիչ ճահճուտները, որտեղ նրանք ենթարկվում էին դարանակալ չերքեզների իբր անակնկալ հարձակմանը և մորթոտվում զազանաբար»²³: Եվ սա, ըստ պրոֆ. Թամկեի, նշանակում է, թե իբր «հարյուր-հազարավոր հայեր մահացել էին տեղահանության ընթացքում»²⁴:

Պրոֆ. Թամկեն խիստ կասկածով է վերաբերում հատկապես Վեզների հրատարակած «Տունդարձի 40 օր ու գիշեր» օրագրին²⁵, որը, սակայն, բացառիկ տեղեկություններ է պարունակում 1916 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Բաղդադից Կ.Պոլիս վերադառնալու ճանապարհին Վեզների հանդիպած հայ գաղթականների ճամբարների մասին: Դրանք ձգվում էին Եփրատի երկայնքով, իսկ տեղահանված հարյուր-հազարավոր հայերից մնացել էին միայն սակավաթիվ ցնցոտիավոր, կենդանի կմախքներ: Նրանց մեծ մասի ոսկորները սփռված էին անապատով մեկ: Ուղևորության ընթացքում Տիբեհի, Մադեն, Ռակկա, Աբու Հերերա, Մեսքենե, մինչև Հալեպ ընկած ճամբարներով անցնելիս, Վեզները ակնատես եղավ հայ գաղթականների բնաջնջման ցնցող պատկերների և իր համար կարևոր դեպքերը գրի առավ նախնական օրագրում՝ կցկտուր, համառոտ նշումների ձևով:

Համեմատելով Արմին Վեզների օրագրային անտիպ գրառումները (ըստ Թամկեի՝ «Պատերազմական օրագիր») 1919-ին տպագրված «Տունդարձի 40 օր ու գիշեր» օրագրի հետ, Թամկեն «հայտնաբերել» է բազմաթիվ տարբերություններ, հետագա հավելումներ՝ այլ գրավոր աղբյուրներից, որոնց օգնությամբ ջանում է հաստատել իր կանխավ հետապնդած նպատակը. իբր՝ Վեզների «Պատերազմական օրագիրը» իր հակիրճ նշումներով չի համապատասխանում հետագայում հրատարակածին: Այստեղից Թամկեն եզրակացնում է, թե Վեզները 1919-ին հայանպաստ գործչի կեղծ կերպար կերտելու հավակնությամբ, օգտվելով այդ տարում Յոհաննես Լեփսիուսի հրատարակած «Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուից»²⁶, իբր նոր տեղեկություններով ճոխացրել է իր պատերազմական շրջանի օրագիրը²⁷:

Իրականում, թեև Լեփսիուսի ժողովածուն և Վեզների «Ճանապարհ առանց տունդարձի» գիրքը՝ երկուսն էլ լույս են տեսել 1919-ին, բայց Վեզների գիրքը պատրաստ էր հրատարակման ավելի վաղ, քանի որ նրա նախաբանը, որը գրվել

23 J. Lepsius, Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam 1919, S.290.
 24 M.Tamcke, S.11.
 25 St u Die vierzig Tage und Nächte der Heimkehr. Aus dem Tagebuche. In: Der Weg ohne Heimkehr, Berlin 1919, S. 145-172.
 26 St u J.Lepsius: Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam 1919.
 27 M.Tamcke, S.84.

է գիրքն ավարտելուց հետո, թվագրված է «հունվար, 1919» տարեթվով, այսինքն՝ այն ժամանակ, երբ Լեփսիուսի ժողովածուն դեռ հրատարակված չէր: Այն լույս տեսավ 1919-ի հունիսին, իսկ Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ առանձնատիպերը Վերսալի հաշտության կոնֆերանս ուղարկվեցին մայիսին:

Թամկեն խնդիրն այնպես է ներկայացնում, թե Վեզներն իր օրագիրը շարադրելիս օգտվել է հայերի տեղահանության մասին Լեփսիուսի հավաքած նյութերից: Մասնավորապես, նա պնդում է, թե Վեզները Դեր-Ջորից հարավ քշված 60000 հայերի հետ գազանաբար վարվելու մասին տեղեկացել է միայն Լեփսիուսի ժողովածուի հրատարակումից հետո, այսինքն՝ 1919թ. երկրորդ կեսին: Ի դեպ, լորդ Բրայսի ժողովածուն, որը լույս էր տեսել ավելի վաղ՝ 1916-ին, Լոնդոնում, նույնպես շատ փաստեր է մատակարարել Վեզներին և Լեփսիուսին՝ երիտթուրքերի կազմակերպած գազանությունների վերաբերյալ:

Հարգելի պրոֆեսորին ստիպված եմ հիշեցնել, որ փաստերի և փաստաթղթերի հետ այդպես անխնամ չեն աշխատում: Վերևում ասվեց, որ Վեզների երկու գրքերը խմբագրված էին արդեն 1916 թ. դեկտեմբերին: Բացի այդ, 1917-20 թթ. աշխատելով Գերմանիայի արտգործնախարարությունում՝ Արմին Վեզները ի պաշտոնե առնչվում էր ընթացիկ պահի քաղաքական-դիվանագիտական փաստաթղթերին, ուստի, իբրև քարոզչության և հակաքարոզչության պատասխանատու, ինքն էլ ներգրավված է եղել Լեփսիուսի ժողովածուն կազմելու գործում և զբաղվել է արտգործնախարարության թղթապանակներից ու անգլիական լրատվությունից անհրաժեշտ փաստեր ու փաստաթղթեր հայթայթելով և Լեփսիուսին տրամադրելով: Դրանով պետք է բացատրել, որ Վեզներն այդ ժողովածուում եղած փաստերին ծանոթ էր արդեն իսկ նախքան նրա հրատարակումը, որովհետև 1919 թ. հունվարին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին գրած ուղերձում նա վկայակոչում է լորդ Բրայսի²⁸ և Լեփսիուսի կազմած ժողովածուները՝ Միջագետքի ճամբարներում հայ ժողովրդի կրած տառապանքների և բնաջնջման մասին. «Պետության պարոն պրեզիդենտ, երբ Դուք թերթելու լինեք սարսափազդու դեպքերի այն ամփոփագրերը, որ անաչառությամբ հավաքել են լորդ Բրայսը Անգլիայում և Յոհաննես Լեփսիուսը Գերմանիայում, ապա կտեսնեք, որ ես չեմ չափազանցում: Երբ անապատում թաքուն շրջում էի տեղահանված գաղթականների ճամբարներով, նստում նրանց վրաններում սովյալների ու մեռնողների հետ իրենց խսիրի վրա, նրանք պարզում էին ինձ աղերսող ձեռքերը: Նրանց քահանաների ձայնը ինձ երդվել տվեց օգնություն խնդրել նրանց համար, երբ կրկին Եվրոպայում լինեմ: Այս նամակը կտակ է, իմ բերանով հազարավոր մեռելներ են խոսում»²⁹:

Նշանակում է 1919-ի հունվարին, երբ Վեզները գրում էր իր բաց նամակը, նրա ձեռքին էր արդեն Լեփսիուսի անտիպ ժողովածուն, իսկ ինքը՝ Յոհաննես Լեփսիուսը, տևական ժամանակով գտնվում էր Նիդեռլանդներում և դեռ չէր վերադարձել: Միթե այս ամենը պրոֆեսորին ոչինչ չի հուշում այդ ժողովածուն կազմելու մեջ Վեզների ունեցած դերի մասին:

Այնպես որ պրոֆ. Թամկեի վարկածը, թե Վեզները կեղծ հեղինակություն շահելու համար իր օրագիրը «ճոխացրել է» Լեփսիուսի ժողովածուի հաշվին,

28 Stü J. Bryce: The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16, Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, Miscellaneous No. 31, London, 1916.

29 Armin T. Wegner: Bildnis einer Stimme, Radaktion: Ulrich Klan und Christoph Haacker, Wuppertal 2008, S. 70 (թարգմանությունը՝ Ա.Մուշեղյանի):

երևակայության արդյունք է և այդ ամենը որևէ կապ չունի նրա պատերազմական շրջանի օրագրի հետ:

Որքան էլ բառաշատ են պրոֆ. Թամկեի «ապացույցները» և կողմնակի վկայություններով խճողված, այսուհանդերձ, ամբողջ հետազոտության մեջ Վեզների ականատես լինելը ժխտող ո՛չ մի հիմնավոր փաստարկ չի բերված: Ուստի, դժվար չէ նկատել, որ ավետարանական աստվածաբանի եզրակացությունը միանգամայն միտումնավոր է և մտացածին: Բանն այն է, որ Վեզների արխիվի մշակողը և նրան հետևելով՝ պրոֆ. Թամկեն «Պատերազմական օրագիր» (Kriegstagebuch) անվան հետ երբեմն շփոթում են այն գրառումները, որոնք նախնական **օրագրային նշումների մշակված և հիշողությամբ լրացված շարադրանքներն են**, և որոնց մի մասը մնացել է անտիպ՝ Վեզների գրական արխիվում: Դա դժվար չէ ապացուցել հետևյալ համեմատությունների միջոցով:

1.Օրագրի նախնական նշումներ՝ «Տիբեցի (10 հոկտեմբերի 1916): Մի 12 տարեկան տղայի դիակ - գերեզմաններ գետի մոտ - զանգվածային գերեզմանոց կողքի ձորում – ցնցոտիներ»³⁰:

Մշակված տարբերակ (անտիպ). «Երբ մենք մտանք թափուր խանը (տպ. իջևանատունը), կողքի պատի բաց դռան մեջ գտանք մի 12 տարեկան հայ տղայի չորացած դիակը... հավանորեն մահացել էր սովահարությունից...»³¹

Թամկեն առիթը չի փախցնում գոհունակությամբ նշելու, թե տղայի մահվան պատճառը Վեզները սովն է համարում - ասում են **«գոհունակությամբ»**, որովհետև դա միանգամայն համապատասխանում է երիտթուրքերին արդարացնելու Թամկեի կոնցեպցիային, իբր հարյուր-հազարավոր տեղահանված հայերը մահացել են ոչ թե զազանություններից ու սպանոցից, այլ բնական պայմանների հետևանքով: 12 տարեկան տղայի դիակը մանրամասն նկարագրելուց հետո Վեզները գնում է շրջակայքը:

«Երբ ես մոտեցա գետին, (տեսա) շատ գերեզմաններ՝ կիսով չափ (ջրի մեջ) ընկղմված, պատմեշի առաջ անհամար հին խարույկներ»: Ապա Վեզները հայտնաբերում է զանգվածային գերեզմանոց. «Կողքի ձորում և ափի վրա կախված անձավներում՝ մասամբ արհեստական, որոնց ծածկի տակ ակնհայտ քողարկել են դիակներն ու մեռնողներին, (տեսա) բազմաթիվ խումացած մարդկային ոսկորներ, մանավանդ զանգեր, մանկական զանգեր, զանգեր՝ կանացի սևահեր խոպոպներով, գրեթե բոլոր կրծոսկրերը նրբորեն ճկված, ինչպես ճարմանդներ³²: Դիերի հոտ» - «գետի մոտերքում ցնցոտիներ և հին իրեր»:

Այս երկու օրագրային գրառումները, այն է՝ հակիրճ նշումները և դրանց ընդարձակ շարադրանքը, որ ես դնում եմ կողք կողքի, Թամկեն զետեղել է իր ատենախոսության մեջ իրարից 134 էջ հեռու (էջ 220 և 85-86)՝ այն բացահայտ դիտավորությամբ, որպեսզի այլ հեղինակների կամայական դրվագների հետ համեմատելով՝ ցույց տա, թե Վեզների փաստարկները ուրիշներից են քաղված, այսինքն՝ «գրական ծագում» ունեն, ուստի ականատեսի վկայություն չեն կարող համարվել:

30 M. Tamcke, Anhang. Die Umstellung der Einzelbeobachtungen zu den Armeniern, S. 220.

31 Nachlass Wegners, Kriegstagebuch, Eintrag unter dem 12 Oktober, handschriftlich 18. Tag, 10. Oktober; M. Tamcke, S. 85-86:

32 «Ziemlich gebogen wie Spangen»-ziemlich (բավական) ուղղում եմ zierlich (նրբորեն), ինչպես տպագիր օրագրում է՝ Մեքեմեն, 15 հոկտեմբերի. Wegner, Heimkehr, S. 166. Վեզներ, ճանապարհ առանց սուղարձի, էջ 68.

Տպագիր տարբերակ. «Արու-Հերերա (11 հոկտեմբերի 1916)³³. - «Վերջին դիակն է: Երբ մտանք քափուր իջևանատունը, որ լի էր աղտեղությամբ ու ժահահոտով, նա ընկած էր բաց դռան մեջ, տասներկու տարեկան մի հայ տղայի սովալուկ կերպարանքը՝ հարդազույն մագերով, մարմինը մինչև ոսկրերը ծյուրված, ձեռքերն ու ոտքերն ասես ձողեր: Միայն ձախ ձեռքը դեռ պատած էր ցնցոտիով: Մոտենալով գետափին՝ նկատում եմ բազմաթիվ գերեզմաններ, հին խարույկների անհամար հետքեր: Մի՞թե այս է այն ահավոր ու սոսկալի բռնագաղթի վերջը³⁴»:

Պրոֆ. Թամկեն Եփրատի առափնյա ձորում և անձավներում հայտնաբերված բազմաթիվ անթաղ դիակներն ու գանգերը, ինչպես և զանգվածային գերեզմանները Վեզների «կեղծ բացահայտումներն» է համարում, որոնց պատճառ դարձած իրադարձությունները այլ աղբյուրներից իբր հայտնի չեն: Եվ այս «բացահայտումների» կեղծիքը ցույց տալու համար բերում է մի «եզակի» վկայություն՝ իբր «Պարսկաստանում Գերմանիայի դեսպան Ռոյսը 1916 թ. փետրվարի 9-ին նույնպես այս իջևանով ուղևորվել է Հալեպ և տեսել ճանապարհին ընկած 15 դիակ, իսկ նրա կառապանը հաշվել է ավելի շատ»³⁵: Ընթերցողը հասկանում է, թե ինչպիսի «անաչառ և վստահելի» աղբյուր կարող էր լինել երիտթուրքերի դաշնակից պետության՝ Գերմանիայի դեսպանի վկայությունը:

2. Օրագրի նախնական նշումներ՝ «Համամ չհասած (12/13 հոկտեմբերի 1916). - Իրար հետ խառնված-ոչ այնքան խեղճ ու սովահար-մեկուկես տարի ճանապարհին-մեծ մասամբ Ադանայից-ստանում են հացի չնչին բաժին-զբաղվում են փողոցային աշխատանքով-մանուկներն ու կանայք գլուխ են կոտրում հացի ու սեխի դատարկ կեղևների համար, ճանապարհին բազմաթիվ սպիտակին տվող կմախքներ»³⁶:

Մշակված տարբերակ (անտիպ). «Սաբխայից մինչև Համամ տանող ճանապարհին. - Եփրատի մի ոլորանի մոտ՝ բարձր ժայռերի տակ, որոնք այստեղ մոտենում են ափին և ծածկված են արծիվների բներով, լուսաբացին մեզ հանդիպում է հայերի առաջին ճամբարը – նույն թշվառությունը, ինչ որ անցյալ տարի, կանգնում է մեր առջև»:

«Նրանք հիմա արդեն շատ են նոսրացած»: Այլևս չեն երևում այն շատ թշվառ ու սովատանջ կերպարանքները, որոնք հավանորեն այս ընթացքում մեռել անհետացել են: Իմ հարցին պատասխանում են, որ իրենց մեծ մասը Ադադայից է, մեկուկես տարի ճանապարհին են, որից վերջին 4 [ամիսը] այս վայրում – իբր «թուրք կառավարությունից ստանում են ամեն մեկը մի չնչին բաժին հաց և օգտագործվում են փողոցային աշխատանքներում»: Մանուկներն ու կանայք կատաղի շրջապատում են մեր կառքը և արյունոտվելու չափ գլուխ են կոտրում մի պատառ հացի և սեխի դատարկ կեղևի համար...Ես տեսա ինչպես մի պառավ կին երեխայից խլում էր հացը՝ պարզապես գործի դնելով ավելի ուժեղի իրավունքը... Գնապարհին սպիտակին տվող շատ մարդկային կմախքներ կան՝

33 Ըստ նախնական օրագրի, Վեզները Արու-Յերերայում եղել է հոկտեմբերի 14-ին, ուստի այստեղ ամսաթիվը սխալ է տպված և պետք է ուղղել՝ 14 հոկտեմբերի:

34 Wegner, Heimkehr, S. 161-162: Վեզներ ճանապարհ առանց տունդարձի, էջ 66:

35 M.Tamcke, S. 86.

36 M.Tamcke, Anhang. Die Umstellung der Einzelbeobachtungen zu den Armeniern, S. 220.

հենց ճամբարին մոտ - և ինչպե՞ս նրանք չպետք է վարժվեին դրան»³⁷:

Ընթերցողը տեսնում է, որ ճանապարհին կատարած կցկտուր նշումների հիման վրա Վեզները շարադրել է կապակցված և մշակված տարբերակը, որը ճշտիվ համապատասխանում է նախնական կցկտուր նշումներին, ուստի և ակա-նատեսի վավերական վկայության արժեք ունի:

Բայց այս երկու՝ նախնական և մշակված գրառումները, որոնք դրել ենք կողք կողքի, պրոֆ. Թամկեն, ինչպես արդեն նշեցինք նախորդ դեպքում, այս պարագայում ևս իր ատենախոսության մեջ գետեղել է իրարից գրեթե 133 էջ հեռու (էջ 87 և 220), համադրելով Լեփսիուսի և այլ հեղինակների տարբեր դրվագների հետ, որպեսզի ցույց տա, թե Վեզներն իր օրագիրը լրամշակել է ուրիշներից քաղած տեղեկությունների հիման վրա, որոնց ինքը ականատես չի եղել: Նույն կերպ վարվել է Թամկեն և մյուս դեպքերում: Այսպես, տարբեր փաստեր և դրվագներ իրար դեմ դնելով, պրոֆեսոր աստվածաբանը ոչ թե նպատակ ունի անաչառ քննել իր առջև դրված օրագիրը, այլ պարզապես իրագործում է իր առջև դրած նպատակը, որ է՝ վարկաբեկել Վեզներին իբրև ականատեսի:

Վերոգրյալ մշակված գրառումը Վեզները չի օգտագործել 1919 թ. հրատարակած օրագրում և դրա փոխարեն դրել է նույն՝ առաջին ճամբարի մի այլ՝ ավելի ամփոփ նկարագրություն, որի մեջ թերևս գրքի ծավալից ելնելով կամ ավելորդ համարելով՝ կրճատել է մանրամասները:

Տպագիր տարբերակ. «Շուտով հանդիպում ենք առաջին գաղթականներին: Բոլոր ճանապարհների եզրերը ծածկված են նրանց ոսկերտոտիքով, որ շլացուցիչ սպիտակին են տալիս արևի տակ: Առաջին ճամբարը մեզ պատահեց Մադենում: Մանուկներն ու կանայք շրջապատում են մեր կառքը, գլուխ կոտրում մի պատառ հացի կամ սեխի դատարկ կեղևի համար»³⁸:

Վեզների արխիվից հրապարակելով վերոհիշյալ անտիպ հատվածը և պատճառ բերելով տարբեր ճամբարներում կրկնվող դեպքերն ու միանման արտահայտությունները, պրոֆ. Թամկեն անվստահելի է համարում Վեզների բերած փաստերն ու ականատես լինելը, գտնելով որ նրա հրատարակած օրագիրը չի կարելի վկայակոչել պատմական փաստերը քննելու համար: Ըստ Թամկեի՝ Վեզները հրատարակած տեքստում նորից դեպքերը այլ վայրեր է փոխադրում կամ բաց թողնում: Հայերի առաջին ճամբարը փոխադրում է Մադեն, որը այլ վկայություններից հայտնի չէ և հիմա էլ ստիպում է, որ կանայք ու մանուկները հացի ու սեխի կեղևի համար³⁹ այստեղ կռիվ տան միմյանց հետ: Իսկ «ճամփեզրին սփռված սպիտակին տվող ոսկորները» Թամկեն կրկնություն է համարում նախորդ Համամ չհասած ճամբարում «սպիտակին տվող մարդկային կմախքների» և զարմանում է, թե ինչպե՞ս է, որ մարդիկ ճամբարի մոտերքում անգամ իրենց նեղություն չեն տվել հանգուցյալներին թաղելու, կարծես խոսքը վերաբերում է մեկ-երկու հանգուցյալի⁴⁰: Բայց մի՞թե այս սև հումորը վայել է մի աստվածաբանի, որն անձամբ խոստովանում է, որ տեղահանության պատճառով մահացածների թիվը հասնում էր մի քանի հարյուր հազարների: Ուշագրավ է, որ Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանատան գաղտնի լեզագիտն խորհրդական ֆոն Ուդոլփիչը 1916 թ. օգոստոսին հաշվել է, որ մինչ այդ գոհ գնացած հայերի թիվը

37 Nachlass Wegners, Kriegstagebuch, Eintrag unter dem 15 und 16 Oktober; Tamcke, S.87.
38 Wegner, Der Weg ohne Heimkehr, S. 162. Վեզներ, ճանապարհ առանց տունդարձի, էջ 66:
39 Տե՛ս M. Tamcke, S. 87-88.
40 Տե՛ս M. Tamcke, S. 87-88.

կազմում էր 1175000⁴¹ (այս հաշվարկը անշուշտ նախատեսված էր ներքին իրազեկման համար):

Այսպան գոհերի հետքը արյան բիծ չէ թողի վրա, որ ծածկես սպիտակ ներկով: Այնպես որ պրոֆեսոր աստվածաբանի սև հումորը միանգամայն ավելորդ է և խանգարում է նրան հասկանալ նույնիսկ պարզ իրողությունը՝ այն, որ վերը բերված երեք գրառումները, որոնց թվում և օրագրային նախնական նշումները, բոլորն էլ վերաբերում են հայերի նույն առաջին ճամբարին, որը գտնվում էր Մադենի ու Համամի միջև և ոչ մի դեպքի կրկնության կամ տեղից տեղ փոխադրելու մասին խոսք չկա: Եվ երբ Վեզներն ասում է, որ բոլոր ճամփեզորերը ծածկված էին սպիտակին տվող ոսկորներով, նշանակում է ականատեսը նկատի ունի Մադենից մինչև Համամ ընկած ճամփեզորերը: Հայերի ճամբարները տեղադրված էին ամառի անառնուն ավազուտներում և կոչվում էին որևէ հայտնի բնակավայրի անունով՝ նայած թե ճանապարհորդը **որ կողմից էր մոտենում դրանց**, և Վեզները ճիշտ է վարվել, երբ հրատարակած տեքստում առաջին ճամբարը կոչում է Մադենի անունով, որովհետև Բադդադի կողմից եկողին առաջինը պետք է հանդիպեր Մադեն (Մատան) բնակավայրը՝ նախքան Համամ հասնելը⁴²: Այս նույն Մադենի մոտի ճամբարի գոյությունը հաստատում է Հալեայի հայ որբանոցի քույր Բեատրիս Ռոնները՝ 1916-ի ապրիլին, հիշատակելով այն Համամ բնակավայրի անունով՝ «մի ճամբար Համամից այն կողմ ընկած ճանապարհի հատվածում (Lager an der Wegstrecke nach Hamam)⁴³, որովհետև Հալեայի կողմից ճամբարին հարող բնակավայրը Համամ գյուղն էր:

3. Օրագրի նախնական նշումներ՝ «Համամ (13/14 հոկտեմբերի 1916).- ավելի մեծ ճամբար-շատ գործավորներ-շուկա-իրար կիպ վրաններում-շատ մանուկներ- ոչինչ չեն ստանում-ապրում են հետները բերած փողով ու ազգականներով- հանդիպում և գրույց քահանայի հետ. մերժում՝ նրա դատերը հետս տանելու համար»⁴⁴:

Այս հակիրճ նշումների հիման վրա Վեզները հաջորդ օրերին (17-18 հոկտեմբերի) շարադրել է իր գրույցը քահանա տեր Տաճատ Արսլան(յանի) և նրա հայրենակից Հակոբ(Յ)աղուբ(յանի) հետ:

Մշակված տարբերակ (անտիպ). «Քահանա տեր Տաճատ Արսլանի և հայ Հակոբ Աղուբի հետևից լուսնի լույսով մտնում են նրա վրանի բացվածքից ներս»- Վրանում տեղի ունեցած գրույցից պարզվում է, որ քահանան ու նրա ընկերները՝ երկուսն էլ Կոստանդնուպոլսի մոտերքից են, մեկուկես տարի ճանապարհին են եղել: «Այդ քաղաքից գաղթած 800 ընտանիքներից դեռ կենդանի են մնացել 25-ը»: Քահանան կորցրել է կնոջն ու որդուն, միայն աղջիկն է կենդանի. մյուս խոսակիցը՝ Հակոբը, բոլորովին մեռակ է մնացել: Թեև քահանան իր հոգևորական զգեստը չի կրում և տվորական գլխարկով է, բայց շարունակում է իր պարտքը կատարել. «Մի օրում միանգամից թաղել է 300 հայի, որ մահացել են բծավոր տենդից:...գրույցի ժամանակ տեր Տաճատը խնդրում է Վեզներին իր դատերը հետը վերցնել՝ վերահաս մահից փրկելու համար. «15-ամյա մի հրաշագեղ էակ,

41 Տե՛ս M.Tamcke, S. 105.

42 Քանի որ ճամբարը չէր գտնվում Մադենում, ուստի ճիշտ կլիներ in Maden (Մադենում) սրբագրել an Maden (Մադենի մոտ):

43 Տե՛ս Lepsius, Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam 1919, S. 261.

44 Tamcke, S. 221: Hamam (13/14 Oktober 1916).

և կոկիկ էլ հագնված: Նրա նշանածը ծառայում էր թուրքական ծովային նավատորմում. նրան գրել են, բայց մեկուկես տարի է՝ նրանից ոչ մի լուր չկա: Քահանան խնդրում է ինձ՝ իր դատերը հետս Կոստանդնուպոլիս տանեմ, բայց ինչ կարող եմ անել ես՝ թշվառս»: Քահանան հավատացած է, որ իրենց բոլորին Դեյր-էս-Չոր են քշելու, որպեսզի այնտեղ սպանեն⁴⁵...:

Զրույցի մնացած մասը, որ բաց են թողնում, Վեզները ներառել է 1919-ին հրատարակած «Տունդարձի 40 օր ու գիշեր» օրագրում, բաց թողնելով միայն քահանայի խնդրանքը՝ իր դատերը տանելու մասին և իր՝ Վեզների ճարահատյալ մերժումը:

Պրոֆ. Թամկեն այստեղ հատուկ շեշտում է բծավոր տեղնը, որից մահացել են հայերը, որովհետև դա նորից համապատասխանում է տեղահանության ժամանակ հարյուր-հազարավոր հայերի «մահանալու» նրա կոնցեպցիային, բայց մոռանում է բացատրել, որ հայ քահանայի դատեր նշանածը մեկն էր այն ավելի քան երկու հարյուր հազար «անհայտ կորած» հայ երիտասարդներից, որոնց պատերազմի սկզբում երիտթուրքերը զորակոչեցին թուրքական բանակ ու նավատորմ և նենգաբար ոչնչացրին բոլորին՝ տեղահանելուց առաջ հայ ժողովրդին զրկելով ինքնապաշտպանության կարևոր ուժից:

Տպագիր տարբերակ՝ «Մեսքենե, 15 հոկտեմբերի. - Երբ իրիկնանում է, քահանա տեր Տաճատ Արսլանյանի հետ նստում եմ նրա վրանի բաց դռանը, և նրանք ինձ պատմում են իրենց կրած տառապանքների, քաղաքի 800 ընտանիքների մասին, որոնց հետ ճանապարհ ընկան. այն բազմահազար մարդկանց մասին, որ նա թաղել էր անապատում, դրանց թվում՝ քսաներեք քահանա և մի եպիսկոպոս»⁴⁶:

4. Օրագրի նախնական նշումներ՝ «Աբու Ռ-երա (14 հոկտեմբերի 1916). - Ճամբար՝ իջևանատան մի կողմում, գետի մոտ-սոսկալի թշվառություն, մեռնողներ ու սովահարներ, խելացնորվածներ-պայքար Մանվելին հետս տանելու համար-հայր որպես վերակացու ժանդարմերիայի ծառայության մեջ-ճամբարաբնակները հաշվառված են տեղահանության հանձնախմբի պետի ցուցակներում-պարան-ներով իրար կապած քշում էին սնունդ ստանալու - երկու շարքով գետնին պայգած- հաց»⁴⁷:

Ռաքքայի մոտ գտնվող տեղահանված հայերի ճամբարում Վեզները հանդիպում է թշվառության մատնված մեռնող, սովահար և խելացնոր բազում հայերի, նրանց գետնատարած մարմինների արանքով վազվզող 13-ամյա Մանվելին: Այս տղային փրկելու և իր հետ Գերմանիա տանելու անհաջող փորձի մասին հուզիչ պատմությունը ևս իր հիմքն ունի նախնական օրագրային նշումներում՝ գրի առնված դարձյալ Աբու-Հերերայում:

Տպագիր տարբերակ՝ «Ռաքքայի մոտերքում, բոլորովին բարձիթողի, մի կեղտոտ ճամբարում հանդիպեցի տասներեքամյա մի տղայի: Նա կորցրել էր մորն ու եղբորը, միայն հայրն էր կենդանի մնացել: Մանվել էր անունը: Արևից պաշտպանվելու համար գլխին մի սպիտակ լաթ փաթաթած՝ նա, կովի պոզ փչելով, ուրախ-ուրախ վազվզում էր սովատանջ, հիվանդ ու մահամերձ մարդկանց կույտերի արանքում, որոնք անշարժ պառկած էին կամ խելագարության

45 St'u Nachlass Wegners, Kriegstagebuch, Eintrag unter dem 17 und 18 Oktober. M.Tamcke, S.90-91.
46 Heimkehr, S. 165, Վեզներ, ճանապարհ առանց տունդարձի, էջ 67:
47 M.Tamcke, Anhang. Die Umstellung der Einzelbeobachtungen zu den Armeniern, S.220-221.

հասած՝ քջշում, ուտում էին իրենց կղկղանքը...Ուզեցի նրան մեր կառքը վերցնել, որ հետս տանեմ Գերմանիա...Խնդրեցի ինձ հոր մոտ տանի, որն պէքսանդրետոցի մի առևտրական էր և կարգված էր ճամբարի պահակ, որովհետև գրել-կարդալ գիտեր... Այն ժամանակ ինքս գնացի արաբ վերակացուի մոտ: Երկու ժամ նստել էի նրա խսիրին և առաջարկում էի մոտս եղած ամբողջ դրամը, բայց չցանկացան տղային ազատ արձակել: Ես խոստացա Հալեպում, վերաբնակեցումների կառավարիչ Հակկի բեյի առաջ միջնորդել նրա համար...»⁴⁸:

Այս դրվագը հրատարակելիս Վեզները կատարել է որոշ ուղղումներ: Նախնական նշումներում ճամբարի վերակացուն հայ է, իսկ սույազքում Վեզները ուղղել է այս շփոթմունքը-հայը՝ Մանվելի հայրը, ճամբարի պահակն է, իսկ վերակացուն արաբ է, որից էլ Վեզները տեղեկանում է, թե «ճամբարի բնակիչները գրանցված են տեղահանության հանձնախմբի պետի ցուցակներում»: Արաբի հաղորդած այս տեղեկությունը ստուգելով՝ Վեզները պարզել է, որ այդ պաշտոնյան վերաբնակեցումների կառավարիչն է և նստում է Հալեպում, ուստի և սույազի օրագրում գրել է ճշտված ձևով. «Ես խոստացա Հալեպում՝ վերաբնակեցումների կառավարիչ Հակկի բեյին խնդրել նրա (Մանվելի) համար»: Նախնական նշումներում սույն դրվագի վերջին տեղեկությունը՝ պարաններով իրար կապած հայերի մասին, հանդիպում է և Վեզների «Մարդկության արտաքսումը» բանաստեղծության մեջ.

*Սողում է նա վայրի դեպի փափարակ,
Կապված են իրար փղամարդ թե կիև.
Բացել է անապատն իր որկորն անրակ,
Որ մարդ, անասուն կուլ փա մոլեգին»⁴⁹:*

Ամփոփելով գալիս ենք այն հետևության, որ օրագրային նախնական կցկտուր գրառումները Վեզները հաջորդ օրերին՝ ավելի ազատ ժամանակ, վերանշակել և լրացրել է հիշողությամբ, բերելով ոճավորված տեսքի՝ որպես ակնառտես վերականգնելով Միջագետքում իր տեսածն ու վերապրածը: Ինչպես նշում է Թամկեն՝ «օրագիրը մեծ մասամբ գրված է մատիտով. Վեզները մասամբ օգտագործել է սղագրություն: Ամփույթ ձեռագիրը և երբեմն նաև կցկտուր նշումները վկայում են, որ այդ ամենը գրի առնողը ակնհայտորեն օրագիրը վարելու համար իր տրամադրության տակ շատ ժամանակ չի ունեցել»⁵⁰:

Այսպիսով, կարելի է հաստատել, որ Վեզների գրական արխիվում պահպանված **օրագրային անտիպ մշակումները**, ինչպես և 1919-ին հրատարակած «Տունդարձի 40 օր ու գիշեր» օրագիրը իրենց հիմքերն ունեն վերադարձի ճանապարհին արած **նախնական օրագրային նշումներում**: Դրանք բոլորը հավասարապես սկզբնաղբյուրի արժեք ունեն, քանզի պատկանում են նույն հեղինակի գրչին և փոխադարձաբար պարզաբանում են միմյանց: Ընդ որում՝ նախնական կցկտուր գրառումները մշակելիս Վեզները հարկ է համարել ճշգրտել ճանապարհին ձիակառքի մեջ հապճեպ համառոտագրման հետևանքով ծագած վրիպումները:

48 Heimkehr, S. 164, Վեզներ, ճանապարհ առանց տունդարձի, էջ 66-67:

49 Վեզներ, ճանապարհ առանց տունդարձի, էջ 69:

50 M.Tamcke, S. 61.

Գալով Թամկեի այն մեղադրանքին, իբր Վեզները, իր իսկ տեսածին չվստահելով, նախնական օրագրում գրի առած դեպքերը 1919-ին հրատարակած օրագրում մի վայրից մյուսն է փոխադրել՝ հարմարեցնելով դրանք ուրիշ հեղինակների հաղորդածին, ապա դա Թամկեի հորինածն է և նրա սխալ մեկնաբանելու հետևանքը, որ նրա համար ծառայում է Վեզների դեմ «գործ սարքելու» շինծու առիթ: Իր նախնական օրագրային նշումներում Վեզները ականատես իրավագետ է, որը ճշգրիտ արձանագրում և տղագրում է ճանապարհին, Սիրիայի անապատներում հանդիպող հայերի մահվան ճամբարներում տեսած սարսափներն իրենց մանրամասներով: Բայց հրատարակած օրագրում, ինչպես և Միջագետքից գրած նամակներում, Վեզներ-ականատեսի կողքին հանդես է գալիս նաև էքսպրեսիոնիստ գրողը, դրա համար էլ Վեզների հրատարակած օրագիրն աչքի է ընկնում գեղարվեստական արտահայտչաձևերով և դժոխային իրականությունը հնարավորինս պատկերավոր խոսքի միջոցով ընթերցողին մատուցելու ձգտումով: Օրագրային նախնական նշումների հաջորդ օրերին, ազատ ժամանակ ունենալով, նոր բնակավայրում, Վեզները մշակել ու ռճավորել է նախնական կցկտուր գրառումները և իր մշակած տարբերակը վերնագրել նոր բնակավայրի անունով և ամսաթվով: Պրոֆ. Թամկեն չի հասկացել, որ դա մշակված տարբերակը գրի առնելու վայրն է և ամսաթիվը, ինչպես նշված է նամակների տակ, այլ ոչ թե կատարված իրադարձությունների վայրերը փոփոխելու հետևանքը:

3.Վերադարձ Միջագետքից և պայքար Հայոց ցեղասպանության դատապարտման համար

Կ.Պոլսից վերադառնալով Գերմանիա, Արմին Վեզները Բրեսլաու ուտք դրեց 1916թ. դեկտեմբերի 8-ին: Այդ պահից պրոֆ. Մարտին Թամկեն օրավոր հետևում, ավելի ճիշտ կլինի ասել՝ հետապնդում է Վեզներին և իր մեկնաբանումներով աշխատում է շարունակաբար իր հակակրանքը փոխանցել ընթերցողին՝ միզուցե հավատացած, որ վերջինս կվստահի գերմանացի պրոֆեսորին: Նրա խոսքով՝ Բրեսլաու վերադառնալուց հետո Վեզները զինվորական գերատեսչության հետապնդումներից խույս է տալիս 8-շաբաթյա արձակուրդով, որը երկարաձգվում է ևս 2 ամսով: 1917թ. մարտի 2-ից որպես ռեկրուտ (այսինքն՝ նորակոչիկ) նա գորակոչվում է դաշտային հրետանու ծառայության: Սակայն 10 օր անց գանգատվում է կույրադիքի շրջանում սկսված ցավերից, որոնք զորավարժանքների հետևանք էին⁵¹: Այնուհետև մոր միջամտությամբ և դիմումով⁵² ապրիլի վերջից մինչև մայիսի 10-ը նրան նորից հաջողվում է արձակուրդ ձևակերպել⁵³:

Այս շարադրանքից ակնհայտ է դառնում, որ գերմանացի պրոֆեսորը չի արդարացնում գերմանական ճշտապահությունը և ժամանակի հաշվարկը: Եվ իրոք, 1916թ. դեկտեմբերի 8-ից հաշված՝ 8-շաբաթյա արձակուրդը (56 օր) պետք է լրանար 1917թ. փետրվարի 2-ին, իսկ ևս 2 ամսվա արձակուրդը կավարտվեր ապրիլի 2-ին: Մինչդեռ Վեզները դաշտային հրետանու ծառայության է գորակոչվել մարտի 2-ից, իսկ դեկտեմբերի 8-ից մինչև մարտի 2-ը կազմում է 3 ամսից

51 Տե՛ս Վեզների նամակը Գերդա Սաուրերին 13 մարտի 1917 - M. Tamcke, S. 134, Anm. 8.

52 Տե՛ս M. Tamcke, S. 134, Anm. 9.

53 Տե՛ս M. Tamcke, S. 134, Anm. 10.

էլ պակաս ժամանակամիջոց:

Այս տվյալները Թամկեն վերցրել է Վեգների նամակներից և սխալ մեկնաբանել: Իրականում 1916 թ. դեկտեմբերի 8-ին՝ Բրեսլաու ուտք դնելուն պես, Վեգները հայտնվեց գերմանական գաղտնի ծառայության և ռազմական գերատեսչության կրկնակի հետապնդման արքցանի մեջ: Նախ՝ 4 ամսվա արձակուրդի փոխարեն, որի իրավունքը նա ստացել էր Միջագետքում գերմանական շտաբից, նրան տրվեց ընդամենը 8-շաբաթյա արձակուրդ (56 օր) նույն՝ Բրեսլաու քաղաքում: Այնուհետև (հավանորեն 1917 թ. փետրվարի 2-ից) նա զորակոչվեց որպես ռեկրուտ (նորակոչիկ) 42-րդ գունդը: Որպես նորակոչիկ ծառայության կանչվելու փաստն ինքնին բացահայտում է, որ ռազմական գերատեսչությունը չեղյալ է համարել Վեգների երկու տարվա զինվորական ծառայությունը Միջագետքում՝ որպես սանիտար զինվոր և ապա կրտսեր լեյտենանտ՝ կոչում, որը ոչ թե ինքն էր շնորհել իրեն, այլ ֆեդմարշալ Ֆոն դեր Գուլցը, ինչպես վկայում է ինքը՝ Վեգները, 1916 թ. օգոստոսի 21-ին ծնողներին գրած նամակում⁵⁴:

Այսպիսով, ուժասպառ և վարակիչ ախտերից հյուծված կրտսեր լեյտենանտը նորից զորակոչվում է որպես «նորակոչիկ»՝ իբրև վրեժխնդրություն Միջագետքից ուղարկված իր հայապաշտպան նամակների համար: Ավելին՝ Գերդա Մաուրերին գրած առաջին նամակում (22 փետրվարի 1917) Վեգները հայտնում էր, թե ինքը ծառայության է զորակոչվել որպես նորակոչիկ դաշտային հրետանու 42-րդ գնդում մինչև մարտի 2-ը, ո՛չ թե մարտի 2-ից, ինչպես հասկացել է պրոֆ. Թամկեն⁵⁵:

Ըստ իս՝ ծանուցագրում նշված է եղել հրետանավորի ուսուցման վերջին ժամկետը, որից հետո նա պետք է ուղարկվեր ռազմաճակատ: Սակայն Վեգների մայրը՝ Մարի Վեգները, որը կանանց պացիֆիստական շարժման ճանաչված գործիչներից էր, բողոքում է իր որդուն հատկացված 4 ամսվա արձակուրդը 2 ամսով կրճատելու և Միջագետքում նրա կրած ծանր հիվանդությունները անտեսելու դեմ⁵⁶:

Այնուհետև, երկարատև վարակիչ ախտերից հյուծված՝ «թնդանոթաձիգ» Վեգները 1917թ. մայիսի 10-ին ազատվում է դաշտային հրետանու 42-րդ գնդի նորակոչիկների գորանոցից և ուղարկվում Բրեսլաու՝ 4-րդ բանակի գլխավոր հրամանատարի տեղակալի ենթակայության տակ՝ լրագրության քարոզչության բաժնում աշխատելու⁵⁷:

Վերոհիշյալ անարդարության դեմ նա զանգատվում էր 1917 թ. հուլիսի 27-ին՝ Բադդադում ծառայող իր բժիշկ ընկերոջը՝ մայոր Շախտին: Արմին Վեգները գրում էր. «...բայց ես դա ընդունում եմ իբրև մեծ անարդարություն այն բազում զրկանքներից հետո, որոնք ես կրել եմ (թեև էլի այդքան հաճույքով) գերմանացի և թուրք զինվորների համար. իսկ որ այդ ընթացքում ես ինքս էլ հիվանդացել եմ, դա էլ վերջապես իմ մեղքը չէ, և կրկնակի մողկալի է այն վարմունքը, որ իմ հիվանդանալուց հետո, երբ ես դեռ չափից ավելի թույլ էի և որևէ բանի անընդունակ, ինձ ուժերիցս վեր ծանրաբեռնեցին, հետո չամաչեցին ասել, որ ես

54 Տե՛ս Der Weg ohne Heimkehr, S.118.

55 Տե՛ս M.Tamcke, S.133, Anm.. 7, «Ich bin bis zum 2 März zur Feldartillerie 42 (Breslau) einberufen».

56 Տե՛ս M.Tamcke, S.134, Anm.9.

57 Տե՛ս M.Rooney: Leben und Werk Armin T.Wegners (1886-1978) im Kontext der soziopolitischen und Kulturellen Entwicklung in Deutschland, S.2.

բանի պետք չեմ»⁵⁸:

Պատերազմը դեռ շարունակվում էր և անհրաժեշտ էր լուսաբանել Գերմանիայի ռազմական գործողությունները՝ ընդդեմ անգլիական «ստահող քարոզչության»: Այստեղ ևս պրոֆ. Թամկեն հեզմանքով շեշտում է, թե իբր՝ Վեզները հանձն առավ «փառաբանել գերմանական բանակի բարոյական բարձր սկզբունքները ընդդեմ անգլիականի»⁵⁹:

Բրեսլաուում ֆիզիկապես ծայրահեղ հյուժված Վեզները իր 8-շաբաթյա արձակուրդի ժամանակ ձեռնամուխ եղավ վաղեմի երազանքի իրականացմանը՝ կարգի բերեց իր բանաստեղծությունների ժողովածուն, որի հրատարակումը խափանվել էր պատերազմը սկսվելու և Միջագետք գորակոչվելու պատճառով: Ժողովածուն լույս տեսավ «Քաղաքների դեմքը» վերնագրով՝ 1917թ. գարնանը: Բայց կարճ ժամանակ անց դատական գործ հարուցվեց Բեռլինում նրա հրատարակչի դեմ՝ ժողովածուում տեղ գտած մի բանաստեղծության համար, որի մեջ իբր՝ փառաբանվում էր սեռական այլասերումը: Իսկ Վեզների անմիջական ղեկավարը նույնիսկ սպառնում էր, թե «մի մարդ, որ այդպիսի անբարոյական գիրք է հորինել, չի կարող աշխատել իր ձեռքի տակ և պետք է նրան նորից ռազմաճակատ ուղարկել»⁶⁰:

Մինչդեռ ինքը՝ Վեզները, այդ դատավարությունը համարում էր Բրեսլաուի գերմանա-թուրքական միության «վրեժխնդրության ակտը» (Racheakt) իր այն հրապարակային զեկուցման համար, որի մի մասը նվիրված էր Միջագետքում թուրքերի իրագործած հակահայկական վայրագություններին և հայերի կոտորածներին: Ի պաշտպանություն Վեզների հիշյալ բանաստեղծության և ամբողջ ժողովածուի՝ դրական կարծիքներ հայտնեցին այնպիսի ականավոր գրողներ, ինչպես Թոմաս Մանը և նրա եղբայր Հայնրիխ Մանը, Կառլ Հաուպտմանը (նշանավոր դրամատուրգ Գերհարդ Հաուպտմանի եղբայրը), Ռիխարդ Դեմելը և ուրիշներ:

Բայց ի վերջո՝ Բեռլինի դատարանը Վեզներին տուգանեց 200 ռայխսմարկ գումարով և առգրավեց մնացած օրինակները: Հայրենիք վերադառնալուց հետո սա Վեզների առաջին լուրջ ընդհարումն էր գերմանա-թուրքական դաշինքի հետ, որն ավելի սրվելու էր մոտ ապագայում: Բայց և այնպես ժողովածուն պատճառ դարձավ, որ Վեզները ազատվի ռազմական ծառայությունից և աշխատանքի անցնի արտգործմասնաբարոյության կիսապաշտոնական «Der neue Orient» («Նոր Արևելք») ամսագրի խմբագրությունում:

Ի դեպ, Վեզների այս շրջանի գործունեության հետ է կապված Ավետիք Իսահակյանի բանաստեղծական գլուխգործոցի՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի գերմաներեն հրատարակությունը: Այդ տարիներին Գերմանիայում գտնվող Կարապետ Մելիք-Օհանջանյանի (ապագա հայտնի բանասեր, ակադեմիկոս) եռանդուն գործակցությամբ, Լիպարիտ Նազարյանի և գերմանացի բանաստեղծ Հայնրիխ Նյորենի համատեղ թարգմանությամբ «Աբու-Լալա Մահարին» լույս տեսավ Բեռլինում՝ «Der neue Orient» ամսագրի 1919 թ. թիվ 2-ում (էջ 77-83): Ամսագիրը բացահայտ թուրքամետ ուղղվածություն ուներ և Վեզներին, որը 1918 թ. սկզբից պաշտոնավարում էր խմբագրությունում, պոեմի հրատարակումը հաջող-

58 St'u Nachlass Wegners, Brief an Dr. Schacht vom 27 Juli 1917. - M. Tamcke, S. 133, Anm. 3.
59 M. Tamcke, S.134.
60 Gespräch zwischen Armin T. Wegner und Martin Rooney, in: Rooney, «Weg ohne Heimkehr» (1972), S.25.

վեց միայն այն պատճառով, որ նրա գլխավոր հերոսն արաբ բանաստեղծ էր:

Մյուս կողմից, արդեն Գերմանիայում եղած ժամանակ՝ 1917թ. կեսերին, Վեզները պատմվածքներ է գրում օսմանյան Թուրքիայում հայերի կոտորածի ու կրած տառապանքների մասին («Հարձակում կանանց բաղնիքի վրա» և «Բանկիրը»), իսկ 1919 թ. մարտի 19-ին Բեռլինի «Ուրանիա» սրահում կարդում է «Հայ ժողովրդի արտաքսումը անապատ» դասախոսությունը՝ ցուցադրելով իր կատարած լուսանկարների սլայդները: Այս ամենից Թամկեն եզրակացնում է, թե իբր՝ Վեզները դա անում էր Գերմանիայի արտգործգերատեսչության քարոզչության բաժնի պատվերով, որպեսզի մեղմացնի Թուրքիայի ոճիրներին Գերմանիայի մեղսակցությունը (գուցե՝ հարգելի պրոֆեսորը ևս նույն քաղաքական նկատառումներով է մեզ՝ հայերիս տրամադրում Վեզների հիշատակի դեմ):

Ավելին՝ հայտնի⁶⁰ է պրոֆ. Թամկեն, որ 1917-1920 թթ. Վեզների հետ գործուն շփման մեջ էին բարձրագույն ուսման նպատակով Հայաստանից Գերմանիա մեկնած և պատերազմի պատճառով այնտեղ պատանդ մնացած Կարո Մելիք-Օհանջանյանը (հետագայում՝ ակադեմիկոս), Հակոբ Չորյանը (մտավորական, 1937 թ. գնդակահարված), բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, դաշնակցական գործիչ Լիպարիտ Նազարյանը և ուրիշներ: Ով-ով, բայց սրանք չէին կարող չնկատել Վեզների «երկիմաստ, հակասական» հայասիրությունը և գործակցությունը արտգործնախարարության քարոզչության բաժնի հետ: Եթե անգամ այս հայագի նշանավոր անձինք բավարար չափով տեղեկացված չէին, ապա ինչպե՞ս կարող էին այդ «հակահայ» միտումները չնշմարել Վեզների հետ համագործակցող և Եղեռնը դատապարտող հասարակական երևելի գործիչներ Յոհաննես Լեփսիուսը (Արևելքում բողոքական առաքելության ղեկավար), Հ.Գեռլախը և Պաուլ Ռորբախը (հայանպաստ շարժման նշանավոր դեմքեր), Մարտին Ռադեն (Մարբուրգի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր), Յոզեֆ Մարկվարտը (ակնավոր հայագետ):

Մինչդեռ իրականում Արմին Վեզները ոչ միայն չի արդարացրել Գերմանիայի մեղսակցությունը երիտթուրքերի գործած ոճիրներին, այլև աշխարհին է ներկայացրել Միջագետքի անապատներում կործանման հասած հայերի ցատումով լի մեղադրանքը, որոնք գերմանացիներին և հենց իրեն՝ Վեզներին ամբաստանում էին թուրքերի հետ դաշնակցելու և հայերին բնաջնջելու համար:

Ահա նման մի վկայություն. «Նրանց հայացքները ճշում էին վրաս. «Դու ինքդ գերմանացի ես,- ասում էին,- և թուրքերին դաշնակից... ուրեմն ճիշտ է, որ դուք էլ էիք այդ ուզում»: Ես խոնարհում եմ աչքերս: Ի՞նչ կարող եմ պատասխանել՝ նրանց կասկածը փարատելու համար»⁶¹:

Սրա հետ մեկտեղ չափազանց ուշագրավ է 1918-ին Գերմանիայի արտգործնախարարությանը Վեզների ներկայացրած խիզախ պահանջը՝ «Գերմանիան կարող է իր մեղսակցությունից արդարացվել միայն այն դեպքում, երբ անկեղծ ու անվերապահ հանդես գա Հայաստանի իրավունքների և ազատության համար»⁶²:

1919 թ. սկզբին Գերմանիայի արտգործնախարարության գաղտնի լեզատ-

61 Heimkehr, S. 165, - Վեզներ, ճանապարհ առանց տունդարձի, էջ 67-68:

62 "Deutschland könne von seiner Mitschuld nur freigesprochen werden, wenn es offen und ruckhaltlos für Armeniens Rechte und Freiheit"-Wegner, Presseerklärung, in: M.Rooney, "Weg ohne Heimkehr"; M. Tamcke, S.157.

խորհրդական դր. Օ. Գյոպերտը, որը միաժամանակ գերմանա-թուրքական միության ղեկավարներից էր, զայրացած իր մոտ՝ արտգործնախարարություն կանչեց Արմին Վեգներին և դիմեց նրան խիստ պահանջով. «Նույնիսկ մասնավոր կարգով չմիջամտել հայկական գործերին»⁶³: Նա պատճառաբանում էր, որ գերմանա-թուրքական միասնությունը ձախողման սպառնալիքի տակ է: Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո էլ Հայկական հարցը դեմ էր առնում գերմանա-թուրքական միասնությանը:

Մինչդեռ, այս փաստերին լավատեղյակ պրոֆ. Թամկեն արտաքին քարոզչության բաժնում Վեգների գործադրած ջանքերը բացատրում է թուրքական ոճիրներում Գերմանիայի մեղսակցությունը մեղմացնելու քաղաքական պատվերով: Սակայն, եթե Վեգները պահանջում էր, որ իր մեղսակցությունը քավելու համար Գերմանիան հանդես գա հայերի իրավունքների և ազատության պաշտպանությամբ, ապա դա նշանակում է, որ Արմին Վեգները՝ մի խիզախ անհատ, դուրս էր եկել Գերմանիայի արտգործնախարարության մեքենայի դեմ, որն իր գերակշիռ մասով բաղկացած էր գերմանա-թուրքական շահերով կապված Օ.Գյոպերտի ու Է.Ջեկի նման բացահայտ ու գաղտնի բազմաթիվ խորհրդականներից:

Բայց Վեգներին այլևս ոչինչ չէր կարող կանգնեցնել, քանզի Օ. Գյոպերտի սպառնալիքից հետո նա 1919 թ. հունվարին գրեց Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին ուղղված իր նշանավոր բաց նամակը, որը լույս տեսավ փետրվարի 1-ին «Frau der Gegenwart» լրագրում, իսկ փետրվարի 23-ին՝ «Berliner Tageblatt» հեղինակավոր թերթում՝ «Կուսակցական պատում» վերնագրով: Այս ուղերձում ևս Վեգները չէր քողարկում Գերմանիայի մեղսակցությունը օսմանյան Թուրքիայի գործած հայաջինջ ոճիրներին. «Պետության պարոն պրեզիդենտ, Դուք պետք է հավատ ընծայեք իմ անկողմնակալությանը, քանզի այս մասին Ձեզ դիմում եմ իբրև գերմանացի, իբրև մի ժողովրդի ներկայացուցիչ, որն ամենատեսերտ կերպով բարեկամացել էր Թուրքիայի հետ: Դրա հետևանքով էլ մեզ պարսավում էին մարդկանց բռնագաղթին մեղսակից լինելու համար»⁶⁴:

Վերջում համարձակություն ունենք հարցնելու. Ի՞նչ կապ ունեն Հայոց ցեղասպանությունը հերքելու և ցեղասպանության ականատեսին վարկաբեկելու քաղաքական նկրտումները ավետարանական աստվածաբանության գիտական աստիճանի հետ: Անշուշտ, պրոֆ. Թամկեն, իրոք, իր ատենախոսության մեջ բավականաչափ նոր նյութեր է ներկայացրել Արմին Վեգների քիչ ուսումնասիրված գրական ժառանգությունից, ինչպես և կարևոր վավերագրեր՝ կողմնակի աղբյուրներից և ժամանակի գերմանական պաշտոնական գրագրությունից, որոնք, հակառակ հարգելի պրոֆեսորի ցանկության, օգնում են խորացնելու մեր պատկերացումները Արմին Վեգների անձի և հայանպաստ գործունեության մասին: Եվ դրա համար իմ երախտագիտությունն են հայտնում աստվածաբանին՝ իր կատարած արխիվային հետազոտության, բայց ո՛չ սնանկ եզրակացությունների համար: Պրոֆ. Թամկեի ներգրաված փաստական նյութերը թույլ են տալիս հիմնովին հերքել իր իսկ՝ վարկաբեկիչ հետևությունները՝ Վեգների

63 Նույն տեղում:
64 Գերմաներեն բնագրից հայերեն թարգմանությունը Ա.Մուշեղյանի: Տպագրված է հետևյալ գրքում. Armin T.Wegner: Bildnis einer Stimme, Redaktion: Ulrich Klan und Christoph Haacker, Wuppertal 2008, S.71.

ականատես չլինելու և իրեն «հերոս ձևացնելու» դիլետանտական հարցադրումները և մեզ բերում են ճիշտ հակառակ եզրահանգումների:

Տարիների հեռվից մենք՝ ուսումնասիրողներս, հետզհետե ավելի ենք արձանագրում մի շատ օբյեկտիվ զգացում. դա ժամանակի տագնապների, ողբերգության, իրական սարսափների, մահվան սպառնալիքների զգացումի, այսինքն՝ կենդանի իրականության խոր ընկալման կորուստն է: Թերևս նաև սա է պատճառը, որ այդ ամենի բովով անցած հասարակական գործչի անձնուրացությունը ոմանց թվում է սնապարծ ինքնահերոսացում: Վեզների դեպքում վերը թվարկված բոլոր սարսափները շատ ավելին են: Միգուցե մեր օրերի հետազոտողին այդ բոլորը աննշան, չնչին բաներ են թվում, հատկապես երբ նա խնդիր ունի ինչ գնով էլ լինի նսեմացնել ցեղասպանության և մանավանդ Հայոց ցեղասպանության ականատեսին:

Հայոց ցեղասպանությունը մերժողների ամենահրատապ խնդիրը այն անհատներին վարկաբեկելն է, ովքեր հանդես են եկել նրա ականատեսի դերում: Հենց այս նպատակն է իր առջև ի սկզբանե դրել պրոֆ. Մարտին Թամկեն, և գոհունակությամբ պետք է նշենք, որ նա լիովին ձախողվել է իր առջև դրած խնդրի կատարման մեջ: Եվ ես շնորհավորում եմ նրան այդ ձախողման համար, որովհետև Արմին Թեոֆիլ Վեզների այս հետմահու հաղթանակը մարդկայնության ու բարոյականության հաղթանակն է:

Summary

A TRY OF DESPISING ARMIN WEGNER'S MEMORY

On Martin Tamkey's Dissertation: "Armin T. Wegner and the Armenians: One Witness's Claim and the Reality"

Albert V. Musheghyan

In 1980-90s the evangelic theologian Martin Tamkey came up with a number of articles, a PhD dissertation and a monograph in Goethingen, Marburg and Hamburg. The mentioned works were addressed against the pure memory of the witness of the Armenian Genocide, Armin Theofil Wegner. In his dissertation "Armin Theofil Wegner: One Witness's Claim and the Reality", separately published as a book in Hamburg in 1993 and 1996, written on the basis of the materials collected by him in the literary archive and extraneous documents, professor M. Tamkey has taken the task to prove that ostensibly Armin Wegner who served as a sanitarian in the German military headquarters did not witness the Armenian Genocide in Mesopotamia in 1915-1916. He also defends the mendacious thesis of the Turkish historiography according to which during World War I thousands of Armenians who were displaced from Asia Minor merely because of military necessity died in the Syrian Desert only because of unfavourable conditions. In the article based on the testimonies of contemporaries, Martin Tamkey's own new publication and Wegner's diaries the undivine and insolvent viewpoints of the Doctor of Theological Studies are being one after the other denied.